Արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն

Արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս:

Պարտատոմս: Պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:

Բաժնետոմս: Բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

Այլ արժեթղթեր: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ արժեթղթեր:

Առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր

Ներդրումային ծառայություններից օգտվելիս Ձեզ մոտ կարող են առաջանալ հետևյալ ռիսկերը.

Արտարժույթային ռիսկ. արտարժույթի փոխարժեքի անբարենպաստ փոփոխությունից հնարավոր կորուստների առաջացում,

Շուկայական ռիսկ. արժեթղթերի շուկայական գների անբարենպաստ փոփոխություններից հնարավոր կորուստների առաջացում,

Վարկային ռիսկ. արժեթղթերի թողարկողի կողմից պարտավորությունների ժամանակին չկատարում կամ մասամբ կատարում,

Տոկոսադրույքի ռիսկ. արժեթղթերի տոկոսադրույքի փոփոխությունից հնարավոր կորուստների առաջացում,

Գործառնական ռիսկ, տեխնիկական միջոցների խափանման հետևանքով հնարավոր կորուստների առաջացում:

Տեղեկացումը ընդունեց _____
(ստորագրություն)

Ընդունված է _____ _____
օր/ամիս/տարի ժամ